

# ԱՆՄԱՀ ՀԱՅՐԵՐ



Հեղինակ՝

ԼՈՒՍԻԷՆ ՂԵՆՈՅ

Թարգմանեց՝

ՍԱՆՏՈՑ ՎԱԿԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Մաշտոց Վահէ Ղազարեան*

# ԱՆՄԱՀ ՀԱՅՐԵՐ

Անհնարին է մերժել Անապատի Հայրերի համբալը. տեղ են գտնում ամէն տեսակի գրականութեան մէջ: Բայց սա, ցաւօք, դեռեւս չի նշանակում՝ թէ նրանց վերաբերեալ կազմուած է իրական եւ ճշգրիտ կարծիք: Նրանց սովորաբար ներկայացնում են որպէս «թաւամազ ուրուականներ, բզկտուած ստուերներ, մարդկային էակների նմանուող ոգիներ»<sup>1</sup>: Չափազանց լաւ ենք ճանաչում Անտոնին՝ մինչ կուում է ամէն տեսակի վիշապների ու հրէշների դէմ, կմախքի չափ նիհար Հերոնիմոսին՝ փարթամ առիծի կողքին, Ոնոփրիոսին՝ որի մագերն էին իր միակ հագուստը, Յովհաննէս Կարճասակին՝ որ ջրում է չորացած ու մեռած բոյսը, Մակարին՝ որ գրուցում է իր ձեռքերի մէջ բռնած գանգի հետ, Սիմէոնին՝ սեան վրայ, Պափնոտիոսին՝ որ սիրահարների ձեռքից խլում է թախիբին, եւ ուրիշ բազմաթիւ գեղեցիկ պատկերներ, որոնց մեծամասնութիւնը շատ յաճախ մի պարզ ծաղրանկար է իրենից ներկայացնում, որ նսեմացնում ու թաքցնում է էականը: Անապատի Հայրերը, ճիշտ է, իրենց կեանքի ընթացքում բաւական տարօրինակութիւններ են գործել, եղել են խիստ ճգնաւորներ եւ մեծ միստիկներ, ապրել են երբեմն որպէս գազաններ, երբեմն էլ որպէս հրեշտակներ, գործել են հրաշքներ եւ մանամարտի են բռնուել սատանաների հետ: Այս բոլորը ճիշտ է, բայց երկրորդական, եւ սրանցով չէ՛ որ Անապատի Հայրերը ձեռք են բերել իրե՛նց միայն յատուկ դիմագիծը: Իրենցից առաջ եւ իրենցից յետոյ, իրօք, շատ ուրիշ Սրբեր գործել են միեւնոյն հրաշքները: Ո՞րն է, ուրեմն, Անապատի Հայրերի առանձնայատկութիւնը, կամ աւելի ճիշտը՝ ո՞րն է նրանց յատուկ պարգեւաշնորհը, որ նրանց համար արժանացաւ արտասովոր վիթխարի շողարձակման եւ որ մինչեւ օրս արժանանում է անհամեմատելի անուան ու համբաւի: Այդ պարգեւաշնորհն արտայայտելու ամենալաւ ձեւը «Անապատի Հայրեր» տիտղոսն է, որ նրանց տրուել է 4րդ դարի վերջից սկսած: Եթէ լաւ հասկանանք, միայն այս տիտղոսն արդէն ներկայացնում է այն ամէնը՝ որ էական է:

## Երկու յատկանշական դիտողութիւն

Արդէն մի քանի դար է՝ ինչ «Անապատի Հայրեր» անուանը տրուած է բաւական ընդարձակ բովանդակութիւն, որից ներս մտցւում են Մերձաւոր Արեւելքում 4-7 դարերում ապրած միանձները, լինեն դրանք միայնակեաց՝ թէ վանական, Անտոնից մինչեւ Յովհաննէս Քղիմաքոս: Բայց սա չէ «Անապատի Հայրեր» անուան առաջնային իմաստը, որ գտնուում է Պալլադիոսի «*Historia Lausiaca*» կոչուող պատմագրքում, ուր հեղինակը պատմում է վանականներին վերաբերուող իր յիշատակները, որոնց ծանօթացել կամ որոնց մասին լսել էր իր Եգիպտոսում եղած ժամանակ, 388-399 թուականների միջեւ<sup>2</sup>: Այն երկու գլուխներում, ուր ակնարկում է «Անապատի Հայրերին», յստակ կերպով երեւում է. 1) որ խօսքը վերաբերում է եգիպտացի միայնակեացներին, որ ապրում են «մեծ անապատում», այսինքն՝ բնակավայրերից հեռու, եւ 2) որ խօսքը վերաբերում է միմիայն «Հայրեր»ին, որոնք պարզորոշ կերպով տարբերում են «անապատում ապրող եղբայրներից»:

Ա՛յլ խօսքերով, Անապատի Հայրերը ունեն երկու իւրայատկութիւններ.

1) Հասել են մինչեւ անապատի խորքերը, ապրելու համար ամբողջովին ամայի վայրերում: Մի բան, որ նրանց զանազանում է եգիպտացի միւս բոլոր միանձներից, լինի

<sup>1</sup> J. Lacarrière, *Les hommes ivres de Dieu*, Paris 1975, p. 10.

<sup>2</sup> Palladio, *Historia Lausiaca*, a cura di Ch. Mohrmann e C. J. Bartelink, Milano 1974.

միայնակեացներից՝ թէ վանականներից, որոնք ապրում էին քաղաքների եւ գիւղերի մօտակայքում, Նեղոսի ինչպէս դէլտայում՝ այնպէս էլ ամբողջ հովտի երկայնքին:

2) Միայն իրենք էին կիրարկում հոգեւոր յատուկ հայրութիւնը, որն իրենց համար արժանացել էր «աբբա» տիտղոսին:

Այս երկու իւրայատկութիւնների հետեւանքն է այն արտասովոր համբաւը, որ լուսէպսակի նման պատում է նրանց ահա տասնհինգ դար շարունակ: Կոչումը, որ առաջնորդեց նրանց դէպի անապատ եւ առաքելութիւնը, որ կատարեցին իրենց կեանքի ընթացքում, բացատրում են այն պայծառ ճառագայթումը, որ Անապատի Հայրերը շարունակում են իրենցից արտաբխել ժամանակի ու տարածքի սահմաններից դուրս, ինչպէս նաեւ նրանց տեւական այժմէականութիւնը Եկեղեցու ներսում:

## 1. Անապատում սարուած Անապատի

### Անապատի Հայրերի եզակի նախաձեռնութիւնը

Մբ. Աթանասի գրչին պատկանող «Վարք Անտոնի» կենսագրութիւնում է, որ ակնյայտ երեւում է նախաձեռնութեան նորութիւնը, չլսուած դէպքը, որ է՝ քրիստոնեայ միայնակեացների ելքը անապատ: Մինչեւ այդ օրերը, միանձներն ու ճգնաւորները ապրում էին քաղաքներում եւ գիւղերում, կամ էլ՝ դրանց անմիջական մօտակայքում: Եգիպտոսում, հազիւ թէ մի քիչ հեռանում են բնակուած եւ մշակուած վայրերից, իսկոյն յայտնւում են անապատում. բայց խօսքը վերաբերւում է «մօտակայ անապատին», «արտաքին անապատին», կարելի է ասել՝ անապատի ափին, եթէ համեմատելու լինենք «մեծ անապատի», «ներքին անապատի», «ամբողջական անապատի» հետ: Այս զանազանութիւնը շարունակ ներկայանում է այդ դարաշրջանի վանական գրականութեան մէջ: Առաջին երեք դարերի ընթացքում, այն քրիստոնեաները՝ որ հրաժարւում էին ամուսնութիւնից, հոգեւոր խիտ կեանք ապրելու համար, մնում էին իրենց գիւղի մօտակայքում, որոշ հաղորդակցութիւն պահպանելով իրենց ազգականների ու բարեկամների հետ, պահպանելով իրենց ունեցուածքների գէթ մէկ մասը, ապահովելու համար իրենց ապրուստը: Մի գեղեցիկ օր, Անտոնը եւ ուրիշներ (ոմանք թերեւս իրենից առաջ), իրենց ներշնչուած են զգում թողնելու ամէն բան եւ մեկնելու դէպի ներքին անապատի արկածները, կտրել անցնելով հարիւր կամ երկու հարիւր կիլոմետր, մինչեւ որ կը գտնէին յարմար մի վայր, ուր հնարաւոր կը լինէր ապրել առանց որ մէկը գար իրենց երբեւէ խանգարելու կամ տաղտկացնելու: Անտոնը մեկնում է Նեղոսի հովտից դէպի արեւելք եւ բնակութիւն է հաստատում Քոլզոն լեռան ստորոտին, Կարմիր ծովից մօտ տասնհինգ կիլոմետր հեռու: Ամոնը եւ Մակարը դէլտայից ուղղւում են դէպի հարաւ, հաստատուելու համար առաջինը Նիտրիայում եւ ապա Քէլիայում, իսկ երկրորդը դե՛ռ աւելի հարաւ՝ Սկիտիում, այժմուայ Վադի էլ Նատրոնում: Բոլորն էլ դէպի անապատ են մեկնում վճռականօրէն, առանց վերադարձի մասին մտածելու, այնտեղ ապրելու եւ այնտեղ մահանալու դիտաւորութեամբ. ապրել միմիայն Աստծոյ համար, քանի որ մահանում էին իրենք իրենց եւ աշխարհին, մարդկանց եւ առարկաներին: Սա է գլխաւոր իրադարձութիւնը, որ տեղի է ունեցել 4րդ դարի սկզբնաւորութեանը եւ որ նկատելի ազդեցութիւն է թողել Եկեղեցու եւ քրիստոնէական հոգեկանութեան յետագայ պատմութեան վրայ:

### Վիթիարի տարողութեամբ իրադարձութիւն

Այս նոր իրականութիւնը, որ տեղի էր ունեցել առանց աղմուկ հանելու, կարող էր եւ պէտք է որ ինքնընտանեան անցնէր աննկատ եւ այդպիսին էլ մնար: Այն սակաւաթիւ անհատները, որ խոսափում էին իրենց նմանների միջավայրից, քաղաքական կարեւոր

անձնաւորութիւններ չէին եւ ո՛չ էլ եկեղեցական պաշտօնեաներ: Անտոնը ուսումներ չունեցող աշխարհական էր, Մակարը՝ նախկին ուղտապան, որ սպասաւորում էր իր գիւղի եկեղեցում, Ամոնը ամուսնացած էր, բայց կնոջ հետ ապրում էր ժուժկալութեան մէջ: Անշուշտ, նրանց առաքինութիւնները արդէն իսկ փայլում էին հարեւան մարդկանց աչքերի առջ եւ, միւս կողմից, ճիշտ գովասանքներից եւ մարդկային փառքից խուսափելու համար է, որ փախչում էին աշխարհից: Բայց յետոյ, անապատի խորքում մէկընդմիջ թաղուելով, թւում է՝ թէ ոչինչ չպէտք է կարողանար նրանց կրկին դուրս բերել արեւի լոյսի ներքոյ: Եւ սակայն, ահա շուտով ճանաչւում են ամէնուր, ոչ միայն Եգիպտոսում, այլ Միջերկրականի բոլոր երկրներում: Ահա թէ ինչ է գրում Աթանասը Անտոնի մասին, վերջինիս մահից մի քանի տարի յետոյ, որ տեղի էր ունեցել 356 թուականին. «Ինչպէ՞ս է, որ մինչեւ Սպանիա, Գաղիա, Հռոմ եւ ամբողջ Աֆրիկայով մէկ խօսւում է այս մարդու մասին, որ ծածուկ ապրում էր մի լեռան լանջին: Ինչպէ՞ս կարող էր սա պատահել, եթէ Աստուած Ինքը չհուշակէր նրան, Աստուած՝ որ ամէնուր փառաւորում է իր մարդկանց ... : Թէեւ այս անձինք ապրում են ծածուկ եւ կամենում են անծանօթ մնալ, Տէրը նրանց դնում է բոլորի առջ որպէս լուսատու ջահեր ... »:

Պատմաբաններն իրենց բոլոր ուժերը գործի են դնում, բացատրելու համար Անտոնի եւ իր նմանների այս արտասովոր ճառագայթումը: Իւրաքանչիւր անշահախնդիր քննարկման համաձայն, անժխտելի փաստ է՝ որ սկզբից ի վեր վկայում է դէպի անապատ այս ելքի գուտ քրիստոնէական նկարագրին: Այն՝ ինչը կարող էր նկատուել որպէս եկեղեցային հասարակութեան լքում, դաւաճանութիւն կամ դասալքում, չափազանցութիւն կամ ուղղակի շեղում եւ մոլորում, ընդհակառակն՝ դարձել է հիացումի ու գովասանքի առարկայ, մեծարուել է որպէս առաքինութեան եւ սրբութեան գազաթնակէտ: «Վարք Անտոնի» կենսագրութիւնը շարադրելով եւ հրատարակելով, Աղեքսանդրիայի Պատրիարք եւ վիթխարի աստուածաբան Աթանասը իր իսկ հեղինակութեան կնիքով վաւերացնում է այս եզակի բարենորոգումը: Աշխարհի ամէն ծայրերից մարդիկ ուղղւում են դէպի Եգիպտոսի անապատները, ուխտագնացութեան են գնում միեւնոյն ջերմեռանդութեամբ՝ որով այցելում են Պաղեստինի սուրբ վայրերը, ամէնուր տարածւում են Անապատի Հայրերի վերաբերեալ պատմութիւնները, նրանց խօսքերը աւանդւում են միեւնոյն եռանդով՝ որով քարոզւում է Աւետարանը: Այս ամբողջ շարժման մէջ կարող ենք նշմարել ո՛չ միայն քրիստոնէայ ամբողջ ժողովրդի կողմից Անապատի Հայրերի սրբադասումը, այլ նաեւ նրանց կեանքի լուծայն հասկացուած վաւերացումը, վաւերացում այն ամէն ինչի՝ որը էական էր նրանց կեանքում, նրանց դէպի անապատ քաշուելու մէջ, մի բան՝ որի սկիզբն էին:

## Անապատ քաշուելու իմաստը

Ակնյայտ է, որ անապատի այս առաջին բնակիչները նմանօրինակ համբաւ չէին ստանայ, եթէ իրենց նմանների ընկերութիւնից փախչէին կռուազանութեամբ ու մարդատեացութեամբ: Նրանց մեծարում էին «Աստծոյ ընկերներ» տիտղոսով, եւ սա ասում է ամէն բան: Տակաւին Աթանասն է, որ այս տողերը գրում է Անտոնի վերաբերեալ. «Փաստը, որ ամէնուր խօսւում է նրա մասին, որ ամէնուր բոլորը նրանով հիանում են եւ որ նաեւ նրանք՝ ովքեր չեն տեսել նրան, հաւասարապէս սիրում են նրան, նշանն է նրա առաքինութեան եւ Աստծոյ հանդէպ ունեցած նրա սիրոյ: Ո՛չ թէ շարադրուած հատորները, ո՛չ թէ աշխարհային իմաստութիւնը, ո՛չ էլ որեւէ մէկ ա՛յլ հնարք, այլ միմիայն Աստծոյ սէրը հուշակաւոր դարձրեց Անտոնին»: Երբ հասաւ անապատ, Անտոնը ոչ միայն քրիստոնէայ էր, այլ արդէն ամենաջերմեռանդներից մէկն էր, նուիրած լինելով կեանքը ողջախոհութեանն ու հոգեւոր արմատական կեանքին: Քրիստոսի շատ ուրիշ աշակերտների նման, որ փափաքում էին շատ աւելի մօտիկից հետեւել իրենց Ուսուցչին, վճռականօրէն հրաժարուել էր ամուսնութիւնից, չունենալու համար ուրիշ որեւէ մէկ մտահոգութիւն, եթէ ոչ միայն՝ Տիրոջը հաճելի լինելու եւ անբաժան սրտով՝ Նրան պատկանելու կամքը: Մի օր Յիսուսի խօսքերը լսելով. «Եթէ ուզում ես կատարեալ լինել,

գնա՛, վաճառիր ունեցուածքներդ ... , ապա ե՛կ եւ հետեւի՛ր ինձ», Անտոնը որոշում է լքել ամէն բան եւ մեկնել: Չէր փոխում կեանքի իր ծրագրերը. պարզապէս կամենում էր իրագործել այդ ծրագրերը հնարաւոր ամենալիակատար կերպով, գնալով ապրելու ամենաամալի անապատում, բացարձակ մենութեան ու լռութեան մէջ: Արդէն իսկ կարող էր արտայայտել այն պատուիրանը, որ աւելի ուշ չէր դադարելու կրկնել իրեն այցելութեան եկողներին. «Աշխարհի մէջ գոյութիւն ունեցող ոչ մէկ բան չպէտք է գերադասուի Քրիստոսի սիրոյն»:

Միայնակեացը խորանում է անապատի մէջ՝ աշխարհից, հարստութիւններից, երկրային հաճոյքներից եւ մարդկային փառքից իր հրաժարումը կատարելագործելու համար: Նա վերջնականօրէն հրաժարում է աշխարհի բեմի վրայ որեւէ դեր խաղալուց, միակ դիտաւորութեամբ՝ գոյութիւն ունենալու միմիայն Աստծոյ աչքերի առաջ: Սա կապերի արմատական խզում է, իրական կամովին մահ, ներշնչուած՝ «յիշատակից այն սիրոյ, որ մեր մարդկանցս հանդէպ ցուցաբերեց Աստուած, չխնայելով իր Որդուն, այլ պարգեւելով Նրան մեր բոլորիս համար»<sup>3</sup>: Թէեւ անապատում ապրելու յստակ հրաւէր չկայ Աւետարանում, այնուամենայնիւ անապատաբնակ կեանքը հանդիսանում է որպէս առանձնաշնորհեալ ընթացքը՝ ամբողջովին իրականացնելու համար Յիսուսի կողմից քարոզուած ծրագիրը, յատկապէս Լեռան Քարոզի ուսուցումները, որոնցում Յիսուս ամենայն պնդութեամբ պատուիրում է գործել միմիայն «երկնաւոր Հօր համար, որ տեսնում է ծածուկ կատարուածները ... : Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել» (հմմտ. Մտթ 6, 4...): Իսկ յետոյ, մի՞թէ Յիսուս Ինքը չէ՞ որ տուել էր անապատական կեանքի օրինակը, եւ մի՞թէ անապատում չէ՞ որ Աստծոյ Միածին Որդին ամենահամարձակ կերպով, Փորձիչի առաջ, արտայայտել էր Հօրն ընծայուած իր բացառիկ ծառայութեան հանդէպ իր նախանձախնդիր հաւատարմութիւնը: «Կ'երկրպագես քո Տէր Աստծուն եւ միմիայն Նրան կը պաշտես» (Մտթ 4, 10): Միայնակեացն ուրիշ բան չէր անում՝ բոլոր արարածներից խուսափելով, միայնակ ապրելու համար իր Արարչի հետ. պարզապէս եւ ամբողջապէս ճանաչում էր Աստծոյ տիրապետութիւնն իր վրայ եւ որպէս Քրիստոսի ճշմարիտ աշակերտ՝ վկայում էր, որ Աստծոյ որդի լինելու հանգամանքը իրեն տալիս էր ո՛չ միայն պարտականութիւնը, այլ նաեւ իրաւունքը՝ ապրելու միմիայն Հօր հայեացքի ներքոյ:

## «Հոգիով ու ճշմարտութեամբ»

«Հասել է պահը», ասել էր Յիսուս, «երբ այլեւս ո՛չ այս լեռան վրայ, ո՛չ էլ երուսաղէմում կը պաշտէք Հօրը: ... Հասել է պահը, եւ սա՛ իսկ է, երբ ճշմարիտ երկրպագուները կ'երկրպագեն Հօրը հոգիով ու ճշմարտութեամբ» (Յվհ 4, 23): Այս խօսքը ամբողջովին յատուկ կերպով կարող ենք վերագրել Անապատի Հայրերին: Ինքնըստինքեան վայրը սակաւ կարեւորութիւն ունի, քանի որ խօսքը վերաբերում է Աստծուն հոգիով երկրպագելուն. բայց եթէ առաջին միայնակեացները Յիսուսի նման Հոգուց մղուած մեկնեցին դէպի անապատի խորքերը, պատճառն այն է՝ որ անապատի մէջ էին տեսնում այն ամենայարմար վայրը, ուր կարող էին երկրպագել Հօրը ճշմարտութեամբ: Ամէն ինչից մերկացած, անապատում ամենայն լիութեամբ կարող էին ապրել Հօրից որդիական իրենց ամբողջական կախուածութիւնը:

Բայց տակաւին հարկաւոր էր, այս նպատակին հասնելու համար, որ նաեւ ներքուստ դրուէին «անապատի վիճակում», այսինքն՝ նոյնանային իրենց շրջապատող բնութեան հետ, իրենց ներաշխարհում իրագործելով դատարկութիւնն այն ամէն ինչից՝ որ կարող էր վերադարձնել իրենց, թէեւ պարզապէս մտովին, դէպի այն աշխարհը՝ որ լքել էին. պէտք է իրենց մէջ իրագործէին բացակայութիւնն այն ամէն ինչի՝ որ կարող էր նրանց սակաւագոյն չափով անգամ շեղել միմիայն Աստծոյ համար ապրելու որոշումից: Այստեղից էր բխում շարունակական արթնութեան, իմաստուն կշռադատութեան,

<sup>3</sup> Աբբա Անտոնի կեանքից:

անդադար ճգնութեան եւ անձանձրոյթ աղօթքի անհրաժեշտութիւնը: Այս բոլոր տարրերը արդէն իսկ ներկայ էին առաջին երեք դարերի քրիստոնէական հոգեկանութեան մէջ, բայց միայն անապատի միայնակեացներէ մօտ է, որ ստացան շատ աւելի մեծ կարեւորութիւն, այն փաստի հետեւանքով՝ որ, այսպէս ասած, դրանց մէջ էր կայանում նրանց ամբողջ գործունէութիւնը, նրանց միակ մտահոգութիւնը: «Աստծոյ գործ»ն <sup>4</sup>, որ դառնում է վանականի միակ գործը. ոչ միայն նրա արհեստը, նրա մասնագիտական զբաղմունքը, այլ նրա ամբողջ կեանքը: Եւ մարմինը սերտօրէն մասնակցում էր այս գործին, ընդմէջ շարժուձեւերի ու կեցուածքի, երկրպագութեան, ծոմապահութեան եւ արթնութեան, նիւթական աշխատանքների եւ շրթունքների աղօթքի: Այսպէս է, որ վանականը անապատում ջանում է իրագործել իր անուան կողմից արտայայտուած միութիւնը (միանձն յունարէն ասում է «monos», որ նշանակում է ամբողջական, չկիսուած), իր ամբողջ էութեան ամբողջական նուիրումը Տիրոջը, հոգիով ու ճշմարտութեամբ:

Անապատի Հայրերը յաճախ են նկատում որպէս միանձնական կեանքի հիմնադիրները. բայց միանձններ, այժմ քաջ գիտենք, գոյութիւն ունէին նրանցից առաջ արդէն, եւ ոչ միայն Եգիպտոսում: Աւելի, Անապատի Հայրերը շեշտել եւ ընդգծել են աշխարհից բաժանումը որպէս միանձնականութեան էական տարր: Եւ ոչ էլ մտադիր էին Եկեղեցում հաստատել անապատի մի նոր հոգեկանութիւն, տարբեր՝ պարզ քրիստոնէական հոգեկանութիւնից: Անապատի Հայրերը քրիստոնէական հոգեկանութեան մէջ պարզապէս բացայայտեցին եւ ի լոյս հանեցին որոշ տարրեր, որոնք ամբողջացուցիչ մասն են կազմում Քրիստոսի պատգամի եւ Նոր Կտակարանի ուսուցումների: Կեանքի պայմանները անապատում պահանջում էին եւ միաժամանակ նպաստում էին վանականի հոգեւոր կեանքի զարգացմանն ու խորացմանը: Արտաքին ամէն տեսակ ցրուածութիւններից ազատուած, այնտեղ՝ անապատի խորքում, միայնակեացը այսպէս ասաց ստիպուած էր միշտ աւելի ու աւելի յառաջանալու սրտի մաքրագործման ասպարէզում, եւ Հոգու առաջնորդութեամբ՝ երկար տարիների ընթացքում այս ներքին հոգեւոր փորձառութեան ապրումը կամաց կամաց ընդունակ էր դարձնում նրան բացայայտելու Աստծոյ ճանապարհների բոլոր գաղտնիքները: Եթէ միայնակեացներից իւրաքանչիւրը մշտապէս ամբողջովին կղզիացած մնար ուրիշներից, իր փորձառութիւնը օրինակելի կը լինէր միմիայն միայնակեացների համար: Բայց անապատում այնքան արագ կերպով աճեց ու բազմացաւ վանական բնակչութեան թիւը, որ շատ շուտով անհրաժեշտ դարձան փոխադարձ խորհրդատուութիւնները, այնպէս՝ որ անհատական փորձառութիւնները ստացան փոխադարձ հարստացում: Ինչպէս նաեւ հարց առաջացաւ՝ թէ ինչպէս էր հնարաւոր միմեանց հաշտեցնել Աստծոյ հետ միայնակ լինելու պահանջները՝ պահանջների հետ եղբայրական սիրոյ: Անապատը, որ «դարձել էր քաղաք», կարող էր իր բարենպաստ արդիւնքները պահպանել միմիայն խուցի մէջ միայնութեան կանոնապահութեամբ եւ փոխադարձ յարաբերութիւնների խիստ սահմանափակմամբ: Եւ ահա այստեղից է, որ բխում է տարրերի, նիւթական եւ մարմնական եւ հոգեւոր վարժութիւնների ու հրահանգումների մի ամբողջութիւն, որը եթէ կամենում ենք՝ կարող ենք անուանել «անապատի հոգեկանութիւն», քանի որ ծնունդ է առել անապատում, բայց որը չի կարող նկատուել որպէս վանականների բացառիկ առանձնաշնորհութիւնը:

## Բոլոր քրիստոնէաների ժառանգութիւնը

Շարունակ ներկայ է անապատի այս ժառանգութիւնը երկու մասի բաժանելու փորձութիւնը. մէկը՝ միայն վանականներին վերապահուած, որն իր մէջ բովանդակում է մարմնական բոլոր հրաժարումներն ու ճգնութիւնները, եւ միւսը՝ որ վերաբերում է լոկ հոգեւոր մասին եւ գործնական է բոլոր քրիստոնէաների համար: Քրիստոնէութիւնը, սակայն, չի ճանաչում զուտ հոգեկանութիւններ, եւ Անապատի Հայրերի նպատակը ճիշտ ցոյց տալն է – եւ շարունակ յիշեցնելը – որ քրիստոնէայի հոգեւոր կեանքը պէտք է ձգտի

<sup>4</sup> Հմմտ. *Abba, dis-moi une parole!*, Solesmes 1984, pp. 49-53.

մարմնանալու նրա գործունեության ամբողջության մէջ: Մի՞թէ քրիստոնեայի մէջ չի բնակուում Քրիստոսի կեանքը, որ ճշմարիտ Աստուած է եւ ճշմարիտ մարդ, լիովին Աստուած եւ լիովին մարդ, մարմին եւ հոգի: Եթէ Աթանաս Աղեքսանդրացին նոյնքան եռանդ է ներդրել Անտոնի վարքը շարադրելու՝ որքան արիստականութեան դէմ պայքարելու մէջ, պատճառն անկասկած այն է՝ որ Անտոնի կեանքում տեսնում էր մի սքանչելի վկայութիւն, ի նպաստ Մարդեղութեան ճշմարիտ ուսմունքի: Անշուշտ, Քրիստոսի բոլոր աշակերտները չէ, որ կանչուած են հետեւելու Անապատի Հայրերի հերոսական հրաժարումներին եւ ճգնողական գործերին. բոլորը, սակայն, նրանցից սովորելիք շատ բան ունեն: Դէպի անապատ իրենց ելքով եւ կեանքով, որ ապրեցին այնտեղ, առաջին միայնակեացները մատնանշեցին քրիստոնէական որեւէ լուրջ կենցաղավարութեան պահանջները. մերկացում, հրաժարում, միայնութիւն եւ լուսթիւն: Ո՛չ թէ մի թշուառ «կ'ուզէի» կամ մի անորոշ ու տարտամ երազանք, այլ իրական եւ արդիւնալի փափաք: Ահա թէ ինչ է անապատի հոգեկանութիւնը, որ Անապատի Հայրերը բացայայտեցին Աւետարանում եւ գործադրեցին իրենց կեանքերից ներս. ո՛չ միայն վանական կեանքի հոգեկանութիւն, այլ քրիստոնէական հոգեկանութեան էական տարրերից կամ դիմագծերից մէկը. հոգեւոր մի տարր, որն եթէ իրական է, անհրաժեշտօրէն կը ձգտի թանձրանալու արարքների եւ գործերի մէջ, որոնցում մարմինը կ'ունենայ իր մասը: Ի վերջոյ, Անապատի Հայրերի յատուկ դերը կայացել է քրիստոնէական հոգեկանութեան մէջ «անապատ» խոր տեղն ու իմաստը ընդգծելու մէջ, մատնանշելու մէջ՝ որ խօսքը չի վերաբերում երկրորդական եւ աւելորդ մի բանի, այլ որ այն կապուած է Քրիստոսի միջոցով Հայր Աստծոյ հետ իւրաքանչիւր քրիստոնեայի ունեցած եզակի եւ անձնական հաղորդակցութեանը: Անապատը ներկայացնում է այն՝ ինչը որ ամէն ոք կարող է եւ պարտաւոր է անել, ըստ այն կոչման՝ որ իրեն յատուկ է, պահպանելու, մշակելու եւ զարգացնելու համար Աստծոյ հետ իր որդիական հաղորդակցութիւնը:

## 2. Հոգեւոր հայրութիւնը անապատում

### Անապատի Հայրեր

Եթէ կամենում ենք ամբողջովին ըմբռնել «Անապատի Հայրեր» տիտղոսի նշանակութիւնը, պէտք է խոսափենք այն վերագրել 4րդ եւ 5րդ դարի բոլոր եգիպտացի միայնակեացներին: Նրանց մէջ բոլոր չէին «Հայրեր»: Պալլադիոսի «Historia Lausiaca» կոչուող պատմագիրքը յստակ զանազանութիւն է դնում Հայրերի եւ եղբայրների միջեւ: Այսպէս է, որ Նիտրիայում Ամոնը նկատուած էր որպէս Անապատի Հայրերից մէկը, իբրեւ «անապատում եղող եղբայրների» անհամեմատելի մխիթարող: Բոլորը չէ, նախեւառաջ, որ անապատ էին գալիս ունենալով Անտոնի, Ամոնի կամ Մակարի կատարելութիւնը: Ոմանք իրենց ուսերին էին կրում մի ալեկոծ անցեալ, ինչպէս Մովսէսը, որ յայտնի էր իր նախկին աւազակութիւններով, թալաններով ու սպանութիւններով: Բոլորը չէ, նաեւ, որ յառաջադիմում էին միեւնոյն արագութեամբ. բնական էր, որ նրանք՝ ովքեր սակաւ յառաջադիմութիւններ էին գրանցել առաքինութեան ասպարէզում, օգնութիւն եւ առաջնորդութիւն ստանալին նրանց կողմից՝ ովքեր առաւել փորձառու էին: Ծննդեան թուականով հաշուած տարիքը կամ վանքում անցկացուած տարիները ոչինչ չէին նշանակում: Միակ բանը, որ կարեւորութիւն ունէր, այն է՝ որ Աստծոյ Հոգու ներկայութիւնը առաւել բացայայտ լինէր նրանում՝ ով այդպիսով ընդունակ էր երեւում խօսելու Տիրոջ անունից: Հերոնիմոսը ասում է «Մակարի, Պամբոյի եւ Իգիլորոսի մասին, որ կոչուում էին Հայրեր՝ որովհետեւ Սուրբ Հոգին խօսում էր նրանց միջոցով»: Աբբա Մովսէսը տեսնում է աղանու կերպարանքով Սուրբ Հոգուն իր աշակերտ Զաքարիայի գլխավորեւում եւ այդ պահից ի վեր սկսում է խորհուրդներ խնդրել նրանից: Բայց անհրաժեշտ չէր, որ Հոգին յայտնուէր հրաշալի կերպով. բաւական էր, որ Իր ծածուկ

ներկայութիւնը յայտնուէր «խօսքի պարզեւաշնորհի»<sup>5</sup> միջոցով եւ ստանար արտասանուած խօսքի համաձայն ապրուած կեանքի վկայութիւնը: Անապատի միայնակեացներէից մէկն իրեն տեսնում է աշակերտներով շրջապատուած, որոնց համար դառնում է Հայր, աւանդելով նրանց պարզապէս այն՝ ինչ ինքը ապրում է ամբողջ լիութեամբ. Աստծոյ խօսքը:

## Մի յատուկ հայրութիւն

Կրդ դարից առաջ, Եկեղեցու ներսում միայն եպիսկոպոսներն էին ճանաչուած հայրեր: Նրանք պաշտօնապէս այդպիսիք էին իրենց ստացած ձեռնադրութեան գորութեամբ եւ որքանով որ աստուածային կեանքը աւանդում էին քարոզչութեամբ եւ խորհուրդների մատակարարութեամբ<sup>6</sup>: Հաւատացեալների հասարակութիւնից հեռանալով, սակայն, անապատի առաջին միայնակեացները խզում են այն տեսանելի կապերը, որոնք իրենց միացնում էին իրենց հովիւներին: Ապրում են այլեւս միայնակ, Աստծոյ հետ ուղղակի հաղորդակցութեամբ, բայց զրկուած, գէթ սկզբնական շրջանում, մարդկայնօրէն աւանդուած աստուածային խօսքից եւ խորհուրդներից: Ովքեր, ինչպէս Անտոնը, «աստուածուսոյց» են, այսինքն՝ Տիրոջ իսկ կողմից կրթուած եւ առաջնորդուած, չեն զգում այդ զրկանքը: Բայց ուրիշ բազումներ շատ շուտով զգում են օգնութիւն ստանալու, յենարան ունենալու, խորհուրդներ ընդունելու եւ առաջնորդուելու կարիքը ինչ որ մէկի կողմից, որն իրենցից աւելի տոկուն է եւ աւելի իմաստուն: Այսպիսով նոր յարաբերութիւններ են առաջանում ուսուցչի եւ աշակերտի միջեւ, որ ստանում են որդիական նկարագիր, եւ անապատում յայտնուած այս հայրութիւնը սկզբից եւեթ ներկայանում է իւրայատուկ դիմագծերով, որոնք հետեւանքն էին անապատի կեանքին պատշաճ պայմանների: Եպիսկոպոսների հայրութիւնը ունէր նուիրապետական եւ պաշտօնական նկարագիր. գոյութիւն ունէր եւ կիրարկուած էր յատկապէս հաւաքական ձեւով, հաւատացեալների ամբողջ խմբի նկատմամբ: Անապատում, հոգեւոր հայրութիւնը հետեւանքն է միայնակեացներից մէկի նախաձեռնութեան, որն ուրիշ մէկին խնդրում է անձամբ առաջնորդել իրեն փրկութեան ճանապարհներում: «Ամէն ոք կամենում էր իր համար հայր ունենալ նրան», ասուած է Անտոնի մասին: Լքելով ամէն բան եւ սեփական հոգու փրկութիւնից բացի ուրիշ ոչինչ չփափաքելով, նա՝ որ անապատ հասնելով ասում էր ծերերից մէկին. «Աբբա, մի խօսք ասա ինձ. ինչպէ՞ս կարող եմ փրկուել», անմնացորդ կերպով յանձնուած էր Աստծոյ ծառայի ձեռքերին, որից սպասում էր ամէն ինչ. յանձնուած էր՝ ինչպէս մանուկն է վարուած իր հօր հետ: Ահա թէ ինչու էր անուանում նրան «Աբբա»:

## Աբբա

Մեր ունեցած փաստաթղթերի միասնական քննարկումը մղում է մեզ համոզուելու, որ Եգիպտոսի անապատներում է, որ առաջին անգամ լինելով յայտնուել է «աբբա» անուանելու սովորութիւնը այն վանականին, որն ընդունակ էր ճանաչուած լինելու իր եղբայրների հոգեւոր հայրը: Մի օր Անտոնը կայսեր կողմից հրաւէր է ստանում գնալու Կոստանդնուպոլիս: Քանի որ չէր կարողանում որոշում առնել՝ թէ ինչ պէտք է անի, հարցնում է Պողոսին, իր աշակերտներից մէկին. «Պէ՞տք է գնամ»: Պողոսը պատասխանում է. «Եթէ գնաս, անունդ Անտոն է, իսկ եթէ չգնաս՝ Աբբա Անտոն»: Այս Պողոսը թերեւս առաջիններից մէկն է, որ սկսում է Անտոնին անուանել «աբբա»: Նրա կոչումը պատմուած է «Historia Lausiaca» պատմագրքում: Անտոնը նրան փորձի է ենթարկում, չորս օր թողնելով դուան առաջ, քաղցած: Հինգերորդ օրուայ երեկոյեան առաջարկում է.

<sup>5</sup> Այս արտայայտութիւնը օգտագործուած է Աբբա Պիմէնի վերաբերեալ:

<sup>6</sup> Հմմտ. I. Hausherr, *Direction spirituelle en Orient autrefois*, Roma 1955, pp. 25-28.

«Ուզո՞ւմ ես մի կտոր հաց ուտենք»: Պողոսը պատասխանում է. «Ինչպէս որ ուզում ես, արբա»: Քանի որ Անտոնը տրամադիր է կերակրելու Պողոսին, նշանակում է՝ որ ընդունում է նրան որպէս աշակերտ, եւ Պողոսը կարող է անուանել նրան «արբա»:

Իրաւացիօրէն կարող ենք զարմանալ թէ ինչու են դպտի միայնակեացները սեմական մի բառ ընտրել, իրենց ծերերին անուանելու համար: Սովորաբար, երբ դպտիները օտար մի բառ էին մտցնում իրենց բառապաշարից ներս, դա անում էին՝ ինչ որ մի նոր իրականութիւն արտայայտելու համար, որը յատուկ եզր չունէր իրենց լեզուում: Արդ, խօսքը վերաբերում էր ճիշտ – ինչպէս քիչ առաջ ասացինք – անապատում կիրարկուած հոգեւոր հայրութեանը, եւ «արբա» բառը, Նոր Կտակարանից փոխ առնուած, ընդգծում է հոգեւոր հօր հետ աշակերտի անձնական յարաբերութեան նկարագիրը եւ միաժամանակ նրա էական կապակցութիւնը Երրորդութիւն-Աստծոյ հետ: Նոր Կտակարանում խօսքը վերաբերում է կոչական եւ ստացական մի եզրի. «Հայր իմ», ուղղուած՝ Ամենասուրբ Երրորդութեան առաջին Անձին, լինի Յիսուսի կողմից (Հմմտ. Մրկ 14, 36), լինի Որդու Հոգու կողմից՝ հաւատացեալի սրտում (Հմմտ. Գղտ 4, 6; Հռմ 8, 15): Իր ծերին դիմելու համար այս եզրը որդեգրելով, վանականը չէր կարող անգիտանալ, ո՛չ էլ մոռանալ այն ճշգրիտ եւ իմաստալի նշանակութիւնը, որ այս եզրը ունի Նոր Կտակարանում: Վանականն այսպիսով պահանջում էր մի անձնական, սերտ եւ խորին կապ նրա հետ՝ ում տալիս էր այս տիտղոսը, եւ անմնացորդ հաւատքի, ինքնայանձնման եւ ենթարկումի զգացումներով դաւանում էր, որ այդ «արբա» ճանաչուած միայնակեացի միջոցով էր իրեն հասնում միակ Հայրը, ընդմէջ Քրիստոսի, Սուրբ Հոգու շնորհիւ: Պողոսի «ինչպէս որ ուզում ես, արբա» խօսքերը, ուղղուած՝ Անտոնին, արդեօք չէի՞ն կարող մօտեցուել Գեթսեմանիում Յիսուսի կողմից արտասանուած խօսքերին. «Արբա ... ինչպէս դու ես ուզում»:

## Խօսք եւ կեանք

«Արբա, մի խօսք ասա ինձ ...»: Արբան նախեւառաջ հանդէս է գալիս որպէս խօսքի մարդը, Աստծոյ բանբերը: Այս խօսքը, կեանքի՝ խօսքը տալով է, որ անապատի առաջին միայնակեացները դարձել են հայրեր, արժանացել եւ արդարացրել են իրենց «արբա» տիտղոսը: Այն եղբայրներին, որոնք զարմացել էին փաստի առաջ, որ Պիմէնը այս տիտղոսը տալիս էր Ագաթոնին, որը տակաւին երիտասարդ վանական էր, ծերը պատասխանում է. «Իր բերանը արժանացաւ արբա կոչուելու»: Խօսքի պարգեւաշնորհն է, որ բացայայտում է հոգեւոր հօրը, եւ սովորաբար խօսքի միջոցով է, որ կիրարկում է այս հոգեւոր հայրութիւնը: Բայց խօսքը միմիայն միջոցն է, գործիքը, անդամը, ջրանցքը, որով աւանդում է կեանքը: Հայրութիւնը էպպէս կայանում է կեանքի այս աւանդման եւ այն հաղորդակցութեան մէջ, որ առաջինի հետեւանքով առաջանում է երկու անձերի միջեւ. նա՝ ով տալիս է կեանքը, եւ նա՝ ով ընդունում է: Գերբնական կարգում, խօսքը այն սերմն է, որի միջոցով մարդկանց աւանդում է Աստծոյ կեանքը, Քրիստոսի՝ Միածին Որդու կեանքը, Հոգու կեանքը: Խօսքը, հետեւաբար, կարեւոր իրականութիւն է. մարդկային խօսքերը, երբ ներշնչուած եւ կերպարանաւորուած են Հոգու կողմից, դառնում են իրենց մէջ կեանք կրողներ: Բայց խօսքերը միակ միջոցը չեն, որով Աստծոյ ծառաները կիրարկում են իրենց հոգեւոր հայրութիւնը: Միայնակեացը հայր է իր ամբողջ էութեամբ եւ իր ամբողջ վարքով ու գործունէութեամբ, այն աստիճան՝ որ կարող է նաեւ չխօսել, կամ այլեւս երբեք չխօսել: Խօսելուց շատ աւելի առաջ, իր լռութեամբ՝ նա հայր է, եւ հայր է մնում նաեւ խօսելուց յետոյ:

Ապոֆտէզմաներից շատ շատերը կարող էինք մէջբերել, որոնցում երեւում է Անապատի Հայրերի այս ճառագայթումը, անկախ նրանց խօսքերից եւ այն ամէնից՝ ինչ ասում են: Արբա Պիմէնը ասում էր արբա Նիսիբերոնի մասին. «Ինչպէս պղնձեայ օձը, որ Մովսէսը շինեց ժողովրդին բժշկելու համար, այդպիսին էր ծերը. ունէր բոլոր առաքինութիւնները եւ լռութեամբ բոլորին բժշկում էր»: Բայց յատկապէս Անտոնն էր արտասովոր ազդեցութիւն գործում իրեն մօտեցողների վրայ: «Նրան պարզապէս

տեսնելով արդէն», վկայում է իր կենսագիրը, «մարդիկ օգտուում էին այն զօրութիւնից, որ նրանից բխում էր ինչպէս Քրիստոսից»: Եւ ապոֆտէզմաներից մէկը հաստատում է Վարքի այս վկայութիւնը: «Երեք հայրեր սովորութիւնն ունէին ամէն տարի այցելելու երանելի Անտոնին: Նրանցից երկուսը հարցեր էին տալիս մտքերի եւ հոգու փրկութեան մասին: Երրորդը, մինչդեռ, շարունակ լռում էր եւ չէր հարցնում ոչինչ: Երկար ժամանակ անց, հայր Անտոնը ասում է. "Բաւական ժամանակ է արդէն, որ դալիս ես այստեղ եւ չես հարցնում ոչինչ": Պատասխանում է. "Ինձ համար, հայր, բաւական է քեզ տեսնելը"»: Նա է, թերեւս, ծերունու ամենաիրական աշակերտը եւ որդին:

Ապոֆտէզմաները ընթերցելիս, երբեմն ստանում ես այն տպաւորութիւնը՝ թէ հարցերը ներկայացնողի համար այնքան էլ կարեւոր չէին արտասանուած խօսքերի դասաւորումը եւ նշանակութիւնը, այլ միակ նպատակը արբային մերձենալն էր, նրա հետ հաղորդակցութեան մէջ մտնելը, նրա կողմից տեսնուած եւ ճանաչուած լինելը. արդէն ամէն ոք գիտէր, որ արբան առանց իր խօսքերը լսելու՝ ճանաչում է իրեն: Ահա սա էր համարում էականը:

Երբ հաստատում էր մի կապ, աշակերտը վստահ էր՝ որ տեղ ունէր արբայի սրտում եւ աղօթքի մէջ, վստահ էր՝ որ փրկուում է նրա միջոցով, այսինքն՝ բժշկուում է անցեալի վէրքերից եւ վերապահւում է ապագայ վտանգներից: Հաւատքով խնդրուած եւ ընդունուած խօսքը յատուկ կերպով ունէր այսօրինակ յարաբերութեան նշանն ու գրաւականը լինելու արժէքը: Պահպանել խօսքը՝ աշակերտի համար նշանակում էր մշակել այդ հաղորդակցութիւնը, մնալ եւ միշտ աւելի ու աւելի դառնալ արբայի որդին: Խօսքի միջոցով որդին մասնակցում էր հօր կեանքին: Յաճախ հոգեւոր այս յարաբերութիւնը կայանում էր ծերունու հետ կեանքի ճիշտ այս հաղորդակցութեան մէջ. այսպիսի դէպքում, նախեւառաջ, խօսքն այլեւս կարեւոր չէր: Ոմանք յանդիմանում էին արբա թէոզորոսին, որովհետեւ պատուէրներ չէր տալիս Իսահակին, որն իր աշակերտն էր: Պատասխանում էր. «Մի՞թէ ինչ որ մի վանքի մեծաւորն եմ, որպէսզի հրամաններ տամ: Մինչեւ օրս ոչինչ չասացի նրան, բայց եթէ կամենում է, ինքը եւս կարող է անել այն՝ ինչ տեսնում է, որ անում եմ ես»: Ահա այսպէս է, որ ծերը կազմաւորում էր իր աշակերտին, որպէսզի վերջինս նոյնպէս լռութեան մէջ միայնակ ապրէր Աստուծոյ հետ: Կարող էր աւելացնել արբա Պամբոյի հետ. «Եթէ օգուտ չի քաղում լռութիւնիցս, օգուտ չի քաղի նաեւ խօսքերիցս»:

## Հայրերի խօսքերի կենդանի ասանդուութիւնը

Բարեբախտաբար, սակայն, Հայրերը խօսել են, եւ նրանց խօսքերի մէկ մասը աւանդուել է յետագայ սերունդներին, այսպիսով դարերի երկայնքին յարատեւ դարձնելով այն ճառագայթումը, որ ունեցել էին իրենց կեանքի ընթացքում: Իրաւացիօրէն են կոչուում «Հայրերի խօսքեր», որովհետեւ բխում են Հայրերից որպէս այդպիսիք, նրանց հայրութեան կիրարկման մէջ իսկ: Օղի մէջ փչած խօսքեր չեն, ո՛չ էլ հոգեւոր մի հեղինակի կողմից գրուած քիչ թէ շատ բարեպաշտ նախադասութիւններ: Խօսքեր են կեանքից բխուած եւ կեանքի մէջ գամուած, որոնց նպատակն է պատասխանել կենսական մի հարցի, մի անյապաղ, կարեւոր խնդրանքի: Թէեւ ապոֆտէզմաներից շատերը, այն վիճակում՝ որով հասել են մեզ, հետքեր չեն պահպանել իրենց առաջացման ճշգրիտ պարագաների վերաբերեալ, նրանց միասնութիւնը, որ հասել է մեզ, յամենայն դէպս իրենից ներկայացնում է մի փաստաթուղթ, որը վկայում է ի նպաստ եզրիպատացի առաջին միայնակեացների հայրական գործունէութեանը: Ինչպէս նաեւ հարկաւոր է նշել, որ այս խօսքերի բանաւոր աւանդումը քիչ թէ շատ տեղի է ունեցել հոգեւոր առաջնորդութեան միեւնոյն միջնորդութեամբ, այսինքն՝ երբ որդիները, իրենք եւս հայրեր դառնալով, իրենց հերթին աւանդում էին իրենց աշակերտներին այն ամէնը՝ ինչ ստացել էին: Նաեւ յետագայում, երբ գրաւոր կերպարանք ստացան, ապոֆտէզմաները շարունակեցին տարածուել վանական կենդանի աւանդութեան ներսում: Երբ դարում, Պաղեստինում, հայր Սաբան, Սկիտոպոլսից անցնելիս այցելում է մի ընտանիքի եւ

օրհնում է նրանց ամենափոքր որդուն, կանխասելով նրա վանական կոչումը. «Այս պահից», ասում է, «այս մանուկը իմ աշակերտն է եւ որդին է Անապատի Հայրերի»<sup>7</sup>: Դէպքը պատմուած է Հայր Սաբայի վանքում վանական դարձած մանկան կողմից (Կիւրեղ Սկիտոպոլսցի), որը միաժամանակ Հայր Սաբայի կենսագիրն է: Հայրերի ապոֆտէգմաները նրան շատ հոգեհարազատ են եւ նա գիտակից է, որ որդիական պատկանելութեամբ մաս է կազմում Եգիպտոսի մեծ միայնակեացների փառահեղ սերունդին<sup>8</sup>:

Տղա դարի աւարտին արդէն, Պաղեստինում շրջում էր այբբենական կարգով դասաւորուած խօսքերի ու արարքների մի ժողովածոյ, որի պատմութիւնները անուն առ անուն վերագրուած էին ամենահռչակաւոր ծերերին<sup>9</sup>: Այդ ժողովածոն նման էր մեծ նախահայրերի կենդանի դիմանկարները հաւաքող մի պատկերասրահի, ուր վանականներն այլեւս կարող էին սերնդէ սերունդ վերագտնել ընտանի դէմքերը բոլոր նրանց, որոնց ընդմիջտ համարելու էին իրենց բոլորի Հայրերը: Բարսանուֆի եւ Յովհաննէսի՝ Գազայի հռչակաւոր փակարանային միայնակեացների նամականին, որ պատկանում է Երգ դարին, տալիս է մեզ յատուկ կերպով իմաստալի մի վկայութիւն՝ թէ ինչպիսի տեղ էին գրաւում Անապատի Հայրերը, իրենց ապոֆտէգմաներով, այդ դարաշրջանի պաղեստինեան վանականների կեանքում: Եւ ո՛չ միայն վանականների. նամակներում յիշուած հանդիպում ենք բազում աշխարհականների, որոնք փոխադարձաբար հոգեւոր օգնութիւն էին մատուցում միմեանց, գործածելով Հայրերի խօսքերը: Վանականներ եւ աշխարհականներ ծամում էին ապոֆտէգմաները, ինչպէս Աստուածաշնչի խօսքերը, գտնելով նրանցում իրենց հաճելի սնունդ, որ յարմարուած էր, ինչպէս մանանան, իւրաքանչիւրի ճաշակին: Ինչո՞ւ զարմանալ, ուրեմն, եթէ նրանց համար նոյնպէս՝ Անապատի Հայրերը իսկապէս ճշմարիտ Հայրեր էին: Սա չէր խանգարում անձնական հոգեւոր հայրեր ունենալուն. ընդհակառակն՝ ապոֆտէգմաները անդադար յիշեցնում էին հոգեւոր առաջնորդութեան օգտակարութիւնը եւ Անապատի Հայրերի խօսքերի լոյսի ներքոյ է, որ այդ վանականները հարցեր էին ուղղում Գազայի իրենց ծերերին եւ որ վերջիններս պատասխանում էին նրանց: Մէջբերումների շտեմարան լինելուց աւելի, Վարք Հարանցը ներկայանում էր որպէս ընտանեկան մթնոլորտը, այն միջավայրը՝ ուր ապրում էին: Այս իրականութիւնը հասկանալու համար, հարկաւոր է որոշ ժամանակով բնակուել Սուրբ Մակարի դպտի վանքում, ուր ամէն օր սեղանատանը ընթերցւում են Հայրերի խօսքերը եւ ուր ամէն երեկոյ, Քօղարկման ժամերգութեան աւարտին, որը համապատասխանում է մեր խաղաղական կամ Հանգստեան ժամերգութիւններին, վանահայրը բոլոր վանականների վրայ հայցում է Հայրերի պաշտպանութիւնը, որոնց յիշում է անուն առ անուն, մի երկար, տպաւորիչ աղօթքով:

Բենեդիկտոսի Կանոնների շնորհիւ՝ արեւմտեան վանականութիւնը նոյնպէս ժառանգել է կեանքի այս նոյն հունը, որ բխում է Անապատի Հայրերից եւ դարերի ընթացքում յարատեւ է պահում նրանց ներկայութիւնը: Անուանելով նրանց «մեր Հայրերը» եւ պատուիրելով ամէն երեկոյ՝ խաղաղական ժամերգութեան աւարտին ընթերցել նրանց ապոֆտէգմաները, որոնց տալիս է Վարք Հարանց անունը, Բենեդիկտոսը խրախուսում է իր աշակերտներին, որպէսզի իրենք եւս համարեն իրենց որդիները Անապատի Հայրերի եւ միշտ յաճախեն նրանց դպրոցը: Մի՞թէ նրանցից չէ, որ Բենեդիկտոսը վերցնում է «Աբբա» տիտղոսը – որով անուանւում են բենեդիկտեան վանքերի մեծաւորները – եւ այն կարեւորութիւնը, որ տալիս է վերջինների հոգեւոր հայրութեանը:



<sup>7</sup> Հմմտ. A.J. Festugière, *Les moines d'Orient*, III/2, p. 110.

<sup>8</sup> Հմմտ. B. Flusin, *Miracle et histoire dans l'oeuvre de Cyrille de Scythopolis*, Paris 1983, pp. 54-60.

<sup>9</sup> Հմմտ. L. Regnault, «*Les Apophtegmes en Palestine*», Irénikon (1981), pp. 320-330.